Նիկոլ Փաշինյանի խոստովանությունը, որ ցնցել է հայ հանրությանը՝ ***«Գիտակցված զոհողության մենք գնացել ենք 2020թ. և, արդյունքում, ձեռք ենք բերել պետություն և անկախություն: Սրանից առաջ էդ բոլոր զոհողությունների հեղինակը մենք չենք եղել, մեզ տարել են կառափնարան և զոհել են իրենց շահերին: Առաջին անգամ մենք զոհողության ենք գնացել մեր պետության համար, մեր շահերի համար, մեր ապագայի համար, մեր ինքնության համար»:***

Երկուշաբթի
30 մարտի 2026թ.
№ 5 (655)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



«Զանգեզուրի միջանցք» թուրք–ադրբեջանական դարավոր երազանքը, որ 2025 թ. օգոստոսի 8-ից ներկայացվում է «Թրամփի ուղի» փաթեթավորմամբ, դժվար թե կենսագործվի՝ առանց ԻԻՀ համաձայնության. այդ է վկայում Իրանի դեմ ագրեսիայի ընթացքը

Ադրբեջանի իրական դեմքը

Նույնիսկ երբ օտարերկրյա լրագրողները ինձ հարցեր են տալիս, նրանք ասում են «Զանգեզուրի միջանցք»: Ինձ շատ հաճելի է լինում ամեն անգամ, երբ դա լսում եմ: Այս տերմինն արդեն մտել է միջազգային լեքսիկոն և, անկասկած, կիրականացվի:

Մենք բազմաթիվ պատճառներ ունենք չճանաչելու Հայաստանի տարածքային ամբողջականությունը: Այնուամենայնիվ, մենք պատրաստ ենք դա անել հանուն ապագա խաղաղության և երկրների միջև հարաբերությունների կարգավորման: Բայց ես չեմ կարող երաշխավորել, որ կես տարի հետո նույնը կլինի:

Ինչ վերաբերում է օդային տարածքի օգտագործմանը, ապա պետք է նաև ասեմ, որ մենք օգտագործել ենք այդ միջանցքն առանց Հայաստանի թույլտվության: Թող բոլորն իմանան, որ մենք նրանց թույլտվությունը չենք ստացել: Դա մեր իրավունքն է, դա միջազգային միջանցք է:

Համաշխարհային ավիացիոն համակարգում կան կանոններ, այսինքն՝ կա հնարավորություն օգտագործելու գոյություն ունեցող միջանցքը: Մենք որոշեցինք դա օգտագործել Զանգեզուրի միջանցքի օդային տարբերակն իրականացնելու համար: Նախիջևան թռիչքը խնայում է ժամանակ և վառելիք, բայց, իհարկե, հիմնականը չէ:

Հիմնական խնդիրը այս միջանցքը բացելն էր:

ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎ
ՄԱՐՏ, 2026 Թ.

Ադրբեջանում հերթական հավակնություններն են հնչել Սյունիքի նկատմամբ: Այսպես կոչված «Արևմտյան Ադրբեջան» համայնքի նախագահ Ազիզ Ալեքբերլին հայտարարել է, թե իբր ««Արևմտյան Ադրբեջանից» փախստականները կվերադառնան իրենց պատմական հողեր», ու իբր «դա նրանց անօտարելի իրավունքն է»:

Նա առիթը բաց չի թողել նշելու, թե Արցախում ներկայումս ընթանում են լայնածավալ շինարարական և վերականգնողական աշխատանքներ, քանի որ հայերը «ավերել են գյուղերը»:

«Մեր փախստականները «կվերադառնան իրենց նախնիների հողերը: Մենք վստահ ենք դրանում»,– ընդգծել է Ալեքբարլին:

26.02.2026

«Արևմտյան Ադրբեջանի» համայնքի ղեկավար Ազիզ Ալեքբերլին հայտարարել է, որ «Արևմտյան Զանգեզուրի» աշխարհագրական անվանումների բառարանի ստեղծումն իրենից ներկայացնում է հոգևոր վերադարձ «պատմական տարածքներ»: Այս մասին Ալեքբերլին հայտարարել է լրագրողներին՝ զանգեզուրյան տեղանուններին նվիրված նոր բացատրական հրատարակության շնորհանդեսի ժամանակ, հայտնում են ադրբեջանական ՁԼՄ-ները:

Կազմակերպության նախագահը նշել է, որ լույս տեսած աշխատությունն ունի մեծ նշանակություն «Արևմտյան Ադրբեջանի» ուսումնասիրության համար և հանդես է գալիս որպես հերթական «ապացույց», որ «Զանգեզուրի մարզը բնիկ ադրբեջանական տարածք է»:

«Գրքում ֆիքսված են մեր բոլոր «պատմական անվանումների ճշգրիտ կոորդինատները», որոնք «դարեր շարունակ ենթարկվել են հայկական կեղծարարության և լիակատար ոչնչացման փորձերի»: Բացի այդ, աշխատության մեջ նշված է դրանց աշխարհագրական տեղադիրքը և ներկայացված է ստուգաբանական բացատրությունը»,– ասել է Ալեքբերլին:

Որտեղի՞ց Ն. Փաշինյանին կոնկրետ ամսաթվով պատերազմի մասին տեղեկությունը

«Էն, որ բոլորը ասում էին՝ «պատերազմ է լինելու», ես ասում էի՝ չի լինելու, լինելու է խաղաղություն, ասում էին՝ «ի՞նչ գիտես», բա 7 տարվա վարչապետ եմ, եթե ես էդ իրավիճակը չկարողանամ գնահատեմ, ես ո՞նց եմ վարչապետ, հիմա էլ ասում եմ՝ լինելու է պատերազմ սեպտեմբերին, ու աղետաբեր պատերազմ, եթե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը սահմանադրական մեծամասնություն.... չեմ ասում՝ ընտրություններում հաղթի, ինձ ասում էիք՝ «18 թվին գայիր ասեիր», հիմա ասում եմ», *– նշել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:*

Այաթոլայ Սայեդ Մոջթաբա Խամենեին՝ Իրանի Իսլամական Հանրապետության առաջնորդ

«Փորձագետների խորհուրդը, ձայների գերակշիռ մեծամասնությամբ, ներկայացրեց այաթոլա Հաջ Սայեդ Մոջթաբա Խամենեիին՝ որպես Իրանի Իսլամական Հանրապետության երրորդ առաջնորդ»,– ասվում է իրանական պարբերականի հրապարակման մեջ:

86-ամյա այաթոլա Ալի Խամենեին սպանվել էր փետրվարի 28-ին՝ Իրանի դեմ ամերիկա-իսրայելական ուժերի նախաձեռնած հարձակման առաջին օրը: Նրա հետ միասին սպանվել էին դուստրը, հարսը, փեսան, 14 ամսական թոռնուհին, իսկ օրեր անց հիվանդանոցում՝ ստացած ծանր վնասվածքներից, մահացել էր նաև այաթոլայի 79-ամյա կինը՝ Մանսուրե Բաղերզադեն:

//

Հայաստան-Իրան սահման, Մեղրիի անցակետ

Առաջին բանը, որ անում են Իրանից ցամաքային սահմանով Մեղրիի անցակետը հատած քաղաքացիները, ինտերնետին միանալն է, որպեսզի իմանան իրենց երկրում տեղի ունեցող պատերազմական վիճակի մասին ու կապ հաստատեն հարազատների և ծանոթների հետ:

Փետրվարի 28-ին սկսած Իրան-ԱՄՆ-Իսրայել պատերազմից հետո օդային ճանապարհը փակ է: Մեղրիի անցակետում, սակայն, Իրանից դուրս եկողների հոսքը մեծ չէ՝ օրվա կտրվածքով՝ մի քանի տասնյակ:

«Հետք»-ը երկու օր հետևում էր իրավիճակին անցակետում: Որոշ քաղաքացիներ դուրս են գալիս Իրանի Իսլամական Հանրապետությունից անվտանգության նկատառումներով՝ անորոշ ժամանակով Հայաստանում անցկացնելու նպատակով, որոշները Հայաստանից են գնում Իրան՝ ընտանիքների մոտ լինելու համար: Հետագայի մասին պատկերացում չունեն, թե ուր են գնալու. միգուցե մի երրորդ երկիր, կամ հետ՝ հայրենիք, երբ իրավիճակը հանդարտվի ու կայունանա: Եկողները մայրաքաղաք Թեհրանից են, Սպահանից, Թավրիզից, այլ քաղաքներից: Բացի իրանցիներից կան նաև այլազգիներ՝ չինացիներ, հնդիկներ, ռուսաստանցիներ, աֆրիկացիներ, ովքեր աշխատանքի բերումով կամ որպես զբոսաշրջիկ գտնվել են Իրանում:

Հայկական անցակետով հիմնականում բեռնատար մեքենաներ են անցնում. և՛ Իրանից Հայաստան, և՛ հակառակը: Մարդատար մեքենաների հոսքը շատ ավելի քիչ է: Պատճառները տարբեր են. ճանապարհները վտանգավոր են, շատերը, անվտանգությունից ելնելով, տեղափոխվում են այլ բնակավայրեր Իրանի մեջ, սակայն դուրս չեն գալիս երկրի տարածքից:

Պատերազմի և դրա հետևանքների մասին իրանցիները տեսախցիկների առաջ շատ չեն խոսում, միայն հույս են հայտնում, որ ամեն ինչ շուտափույթ ավարտվի և խաղաղություն հաստատվի իրենց հայրենիքում:

09.03.2026

Իրանի նոր առաջնորդի առաջին ուղերձը. նա հարևաններին կոչ է արել փակել ԱՄՆ-ի բազաները

Իրանի նոր գերագույն առաջնորդ Մոջթաբա Խամենեին հանդես է եկել առաջին ուղերձով, որում կոչ է արել հարևաններին՝ փակել իրենց երկրներում գտնվող ամերիկյան ռազմակայանները:

Խամենեիի խոսքով՝ Իրանը միշտ ջերմ և կառուցողական հարաբերություններ է պահպանել բոլոր հարևանների հետ, սակայն ԱՄՆ-ն երկար տարիներ այդ երկրներից մի քանիսում ռազմական բազաներ է կառուցել և շարունակում է կառուցել՝ տարածաշրջանում իր գերիշխանությունը հաստատելու համար: Այդ բազաներից մի քանիսն օգտագործվել է Իրանի դեմ վերջին ագրեսիայի ընթացքում, ինչին ի պատասխան Թեհրանը նույնպես հարձակվել է դրանց ուղղությամբ:

Նա ընդգծել է, որ Իրանի զինված ուժերը կշարունակեն գրոհել այդ օբյեկտների ուղղությամբ՝ միաժամանակ ձգտելով բարեկամական հարաբերություններ պահպանել հարևան երկրների հետ: Խամենեին ընդգծել է, որ այս պետությունները պետք է ընդունեն, որ անվտանգության և խաղաղության մասին ամերիկյան հայտարարությունները կեղծիք էին:

Խամենեին շեշտել է՝ Հորմուզի նեղուցը պետք է փակ մնա:

Նա հավաստիացրել է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը չի ձգտում որևէ զավթողականության և գերիշխանության տարածաշրջանում, այլ ցանկանում է անկեղծ փոխըմբռնում հարևանների հետ:

Խամենեիի խոսքով՝ Իրանը նաև նյութական փոխհատուցում է ակնկալում ԱՄՆ-ի և Իսրայելի հետ հակամարտության ընթացքում պատճառված վնասի համար:

Նա ընդգծել է, որ Իրանը չի հրաժարվի նահատակների արյան համար վրեժխնդրությունից: Վրեժը ծրագրվում է ոչ միայն այաթոլա Ալի Խամենեին սպանելու, այլև յուրաքանչյուր սպանված իրանցու, մասնավորապես՝ Մինաբում անմեղ երեխաների արյան համար:

Իրանի նոր գերագույն առաջնորդը հաստատել է, որ ԱՄՆ–ի և Իսրայելի գործողությունների հետևանքով մահացել են իր կինն ու քույրը:

Հիշեցնենք՝ ԱՄՆ-ն և Իսրայելը փետրվարի 28-ի առավոտյան սկսեցին հարվածներ հասցրել Իրանին: Սպանվեցին երկրի գերագույն հոգևոր առաջնորդ այաթոլա Ալի Խամենեին, Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Աբդուլռահիմ Մուսավին, պաշտպանության նախարար Ազիզ Նասիրզադեն, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) հրամանատար Մոհամմադ Պակպուրը և պաշտպանության խորհրդի քարտուղար Ալի Շամխանին: Երկրում 40-օրյա սուգ է հայտարարվել: Իրանը պատասխան հրթիռային հարվածներ է հասցնում Իսրայելի տարածքին, ինչպես նաև Մերձավոր Արևելքում գտնվող ամերիկյան ռազմական օբյեկտներին:

Իրանի հարավում գտնվող Մինաբ քաղաքի դպրոցին հասցված հարվածի հետևանքով զոհվել է 175 մարդ, մեծ մասը՝ աշակերտներ:

12.03.2026

Զանգեզուրի ՊՄԿ–ի արդիականացման օրակարգում թվային փոխակերպումն է

«Ուրախ ենք մասնակցել թվայնացմանը նվիրված Հայաստանի ամենագլխավոր միջոցառմանը՝ Doing Digital Forum 2026-ին և միաժամանակ հանդիսանալ նաև համաժողովի արդյունաբերական փոխակերպման գործընկեր: ԶՊՄԿ-ի կայուն զարգացման և արդիականացման օրակարգում թվային փոխակերպումը մեծ տեղ է զբաղեցնում:

Թվային տնտեսությունը հաճախ դիտարկվում է հարթակների և ալգորիթմների տեսանկյունից, սակայն դրա իրական հիմքում այն արդյունաբերական ճյուղերն են, որոնք ապահովում են ժամանակակից տեխնոլոգիաների համար անհրաժեշտ հումքային ռեսուրսները: ԶՊՄԿ-ում թվայնացումն այն շարժիչ ուժն է, որն արդյունաբերությունը դարձնում է ավելի խելացի, անվտանգ և կայուն»,– ասել է ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը: //

ԶՊՄԿ-ն արձագանքում է Արամ Սարգսյանի հայտարարությանը

ԱՐԱՅԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ
«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ

«Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը օրեր առաջ շուրջ երկու ժամ տևած հարցազրույցում անդրադարձել է մի շարք հարցերի՝ քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական: Քննարկվող թեմաների շրջանակում Արամ Սարգսյանը խոսել է հանքարդյունաբերության ոլորտից՝ մասնավորապես հիշատակելով Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ ցույցերը: Անդրադարձել է նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությանը, Արծվանիկի պոչամբարին և հանքի ընդլայնման հնարավորություններին:

Խոսելով Ամուլսարի շահագործման դեմ կազմակերպված ցույցերից՝ Արամ Սարգսյանը նշել է.

«Ամուլսարի այդ ճանապարհները փակողներին վճարում էր և էդտեղ էր ուղարկում Քաջարանի կոմբինատը: Էս մասին էլ են թերթերը գրել բազմաթիվ անգամներ, լուսանկարել են մեքենաները»:

Սարգսյանը սա ներկայացնում է որպես «ռուսական կապիտալի» պայքար ընդդեմ «արևմտյանի»՝ պնդելով, որ «ռուսները» ասում են՝ «Թեղուտը, Քաջարանը, Ագարակը, Ղափանը մերն է, ինչու պիտի Ամուլսարը կանադական լինի», և ինքը հենց դրա համար էր պայքարում:

«Ամուլսարի բնապահպանական էդ խնդիրներն ինչի՞ էի ես համարում իրենց ռուսական: Շատ պարզ, որովհետև, գիտե՞ք ինչ, կա Սոթքը, որը ոսկի է ստանում Արարատում, կա Քաջարանը, որի դամբան (նկատի ունի պոչամբարը) ահռելի խնդիրներ ունի, էլ չեմ խոսում Ագարակի դամբայի մասին, որովհետև էդ մասին արդեն պարսկական կողմը քանի անգամ զգուշացրել է Արաքսի մասով: Էս մարդիկ աշխատում են, ինչ ասեմ, 1960-ական թվականների տեխնոլոգիաներով»:

Շարունակելով թեման՝ Արամ Սարգսյանը բերել է Ադրբեջանի օրինակը, թե ինչպես էր նավթի արդյունահանումից էկոլոգիական վնաս կրում Կասպից ծովը, և նշել է.

«Ադրբեջանը իր նավթային ռեսուրսների կառավարման՝ նավթային ու գազային ռեսուրսների կառավարման 92 թե 93 տոկոսը տվեց բրիտանական էդ ընկերությանը (BP): Արդյունքում ինքը սկսեց թե էկոլոգիայի առումով ավելի մաքուր պահել Կասպիցը, և թե՛ շատ մեծ շահույթներ ունենալ, որովհետև էդ ընկերությունը չէր գողանում, հասկանո՞ւմ եք՝ ի տարբերություն այ էդ ռուսական ընկերությունների, որոնք Ամուլսար, չգիտեմ, էկոլոգների էին վճարում, որ այն չաշխատի, որովհետև տրամաբանությունը գիտե՞ք ինչումն է... Ես ռուսների թշնամի չեմ, ես ուզում եմ ռուսները մրցակցություն ունենան, որ նրանց ցույց տամ՝ էկոլոգիականն ինչ է, որ նրանց ասեմ՝ այսքան տարի Քաջարանում եք, դուք դեռ Քաջարանի Սովետական Միության բացած հանքավայրն եք օգտագործում, դուք ձախ ափ անգամ չեք գնացել, դուք գետի հունի մասին ընդհանրապես չեք մտածել: Էդ Քաջարանը մեկ միլիոն տոննա կոնցենտրատ կարող է արտադրել, էսօր ինքն արտադրում է 240-ից 250 հազար տոննա»:

Առաջին անգամ չէ, որ Արամ Սարգսյանը նման որակումներ է տալիս: Հարկ է նշել, որ ԶՊՄԿ-ում սեփականատիրական փոփոխությունը տեղի է ունեցել 2021-ին, այսինքն՝ Ամուլսարի դեմ ակտիվ պայքարից տարիներ անց: Իսկ այն օրերին, երբ Արամ Սարգսյանի պնդմամբ ԶՊՄԿ-ն ֆինանսավորում էր Ամուլսարի դեմ պայքարը, ԶՊՄԿ-ի խոշոր սեփականատերը արևմտյան, մասնավորապես՝ գերմանական ընկերություն էր: Միտումնավո՞ր է պարոն Սարգսյանը աղավաղում փաստերը, թե՞ պարզապես լավ չի հիշում:

Վերը նշված պնդումների վերաբերյալ պարզաբանում ենք խնդրել ԶՊՄԿ-ից: Ընկերությունը պաշտոնական պատասխան չտրամադրեց, սակայն մեր հարցերին ընդհանուր շեշտադրումներով պատասխանեց լրատվության և հանրության հետ կապերի բաժնի պետ Արայիկ Մարգարյանը.

«Չէի ցանկանա մեկնաբանել քաղաքական հայտարարությունները կամ աշխարհաքաղաքական գնահատականները, բայց կոնկրետ այս դեպքում կան ԶՊՄԿ-ի վերաբերյալ բազմաթիվ փաստական սխալներ, որոնց կարճ կանդրադառնամ: Մասնավորապես՝ այն ժամանակաշրջանում, որը նշում է Արամ Սարգսյանը՝ Ամուլսարի դեմ գործընթացների համատեքստում, իր կողմից որպես «ռուսական» ներկայացվող հանքերից մեկն իրականում բրիտանական էր, մյուսը՝ հայկական, իսկ կոնկրետ ԶՊՄԿ-ի հիմնական բաժնեմասը պատկանում էր գերմանական ընկերությանը: Այսքանը միայն բավարար է հասկանալու համար, թե որքանով են հիմնավոր ԶՊՄԿ-ի մասին հնչած մյուս գնահատականները:

Կարծում եմ, որ Հայաստանի տնտեսության կարևոր օղակները չարժե շահարկել քաղաքական նպատակներով: Աներկբա է, որ ԶՊՄԿ-ն ահռելի առաջընթաց է արձանագրել հատկապես վերջին տարիներին՝ բնապահպանական կառավարման ոլորտում: Սկսած թեկուզ այն փաստից, որ Հայաստանում միակ ընկերությունն է, որը միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան, միջազգային լավագույն խորհրդատվական կազմակերպությունների մասնակցությամբ արդեն չորրորդ տարին անընդմեջ հրապարակում է կայուն զարգացման զեկույց: Կարելի էր առնվազն ծանոթանալ այդ զեկույցներին և տեղեկանալ այն բազմաշերտ բարեփոխումներին, այդ թվում՝ բնապահպանական և կառավարչական ոլորտներում, որոնք իրականացվել են այս տարիներին:

Ընկերության ընդլայնման և արդիականացման ծրագրի մասին նույնպես հրապարակային խոսվել է: Հենց հիմա ընդլայնման բնապահպանական և սոցիալական ազդեցության բազմակողմ ուսումնասիրությունն իրականացնում է անգլիական ընկերություն, որը ոլորտի լավագույն խորհրդատվական կազմակերպություններից մեկն է: Արծվանիկի պոչամբարի ամբարտակի կայունության և կառավարման բարեփոխումների ծրագիրն արդեն մի քանի տարի իրականացվում է մեկ այլ հանրաճանաչ միջազգային մասնագիտական ընկերության մասնակցությամբ, որին նույնպես ներգրավել է ԶՊՄԿ ներկայիս ղեկավարությունը:

Սա զուտ՝ որպես տեղեկատվություն: Այս և բազմաթիվ այլ տեղեկություններ հասանելի են առավել քան թափանցիկ աշխատող մեր ընկերության գործունեությանը իսկապես հետևող բոլորի համար: ԶՊՄԿ-ն հայաստանյան ընկերություն է՝ ՀՀ կառավարության մասնակցությամբ, և ամենայն պատասխանատվությամբ կարող ենք պնդել, որ վերջին տարիներին այն ԲՍԿ բարեփոխումների առումով առաջատար ընկերություններից է ոչ միայն Հայաստանում, այլև ոլորտային ընկերությունների շրջանում՝ տարածաշրջանում:

Հանքարդյունաբերությունը բազմաշերտ, բարդ և լուրջ ոլորտ է մակերեսային վերլուծությունների համար: Ոլորտի ցանկացած ընկերության մասին խոսելիս, անկախ քաղաքական նպատակներից, լավ կլինի հենվել միայն ճշգրիտ տեղեկատվության վրա: Ի դեպ, իմ համոզմամբ, Ամուլսարի շուրջ խնդիրները հենց նման անտեղյակ դատողությունների հետևանք էին»:

13.03.2026

Ընտրություններին կուսակցությունների անցողիկ շեմն իջել է 4%, դաշինքներինը բարձրացել՝ 8-10%

ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը ներկայացրել է Ընտրական օրենսգրքի այն փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել փետրվարի 7-ից:

Ըստ փոփոխությունների՝ խորհրդարան կուսակցությունների անցողիկ շեմն իջել է 4 տոկոսի, իսկ դաշինքների շեմը բարձրացել է 8 տոկոս և 10 տոկոս:

«Մինչև 3 կուսակցություն դաշինքի կազմում ընդգրկվելու դեպքում անցողիկ շեմը 8 տոկոս է, իսկ 3 և ավելի կուսակցությունների դեպքում դաշինքը պետք է հաղթահարի 10 տոկոսի շեմը»:

Միաժամանակ փոփոխվել է գրավի չափը, կուսակցությունների դեպքում գրավի չափը 10 մլն-ից իջեցվել է 7.5 մլն-ի, իսկ դաշինքների պարագայում՝ սահմանվել է 15 մլն: *«Սա արվել է այն միտումով, որպեսզի օրենսդրությունը նպաստի քաղաքական ուժերի խոշորացմանը, և գաղափարակից ուժերը հակված լինեն միավորվելու, և կուսակցությունները խոշորանան: Երբ մեզ անհրաժեշտը եղավ ՀՀ-ում գրանցված կուսակցությունների կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստ, որպեսզի հնարավորություն ունենաք նրանց նամակներ հղելու՝ ԿԿՀ-ն մեզ 126 կուսակցության տվյալ տրամադրեց, սակայն ամենայն հավանականությամբ՝ գրանցված կուսակցությունների ցանկն ավելի շատ է: Այս թիվը 2.5 մլն ընտրող ունեցող երկրի պարագայում, կարծում եմ, մեծ է: Եթե օրենսդրությունը նպաստի, որպեսզի ստեղծվեն խոշոր քաղաքական ուժեր, սա շատ կարևոր արդյունք կլինի և կնպաստի ժողովրդավարության զարգացմանը, ընտրությունների որակի շարունակական բարձրացմանը»,*– ասաց ԿԸՀ նախագահը: //

Հայաստանում 3 նոր խոշորացված համայնք կձևավորվի

«Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը հավանության արժանացավ կառավարության նիստում:

Նախատեսվում է միավորել 9 համայնք՝ 80 բնակավայրով և ձևավորել 3 խոշորացված համայնք 3 մարզում՝ Ստեփանավան համայնքը Լոռու մարզում՝ ներառելով Ստեփանավան, Գյուլագարակ և Լոռի բերդ համայնքները՝ ընդհանուր 20 բնակավայր, Գորիս համայնքը Սյունիքի մարզում՝ ներառելով Գորիս, Տաթև, Տեղ համայնքները՝ ընդհանուր առմամբ 28 բնակավայր, Եղեգնաձոր համայնքը՝ Վայոց Ձորի մարզում՝ ներառելով Եղեգնաձոր, Արենի, Եղեգիս համայնքները՝ ընդհանուր առմամբ 32 բնակավայր:

Արդյունքում ՀՀ համայնքների թիվը ներկայիս 70-ի փոխարեն կկազմի 64: //

ԶՊՄԿ-ի ֆինանսավորմամբ հաշմանդամություն ունեցող 45 երեխայի տրամադրվում են ֆիզիոթերապևտիկ ծառայություններ

Ընկերությունը հատուկ կարևորությամբ ու պատասխանատվությամբ արդեն շուրջ 10 տարի աջակցում է «Հույսի և հավատի օջախ» հասարակական կազմակերպությանը, որը տարածաշրջանում բնակվող հաշմանդամություն ունեցող շուրջ 45 երեխայի տրամադրում է ֆիզիոթերապևտիկ ծառայություններ:

2017 թվականից ԶՊՄԿ-ն յուրաքանչյուր տարի 4 մլն դրամ է հատկացնում կազմակերպությանը՝ երեխաների առողջական վիճակը բարելավելու, ինչպես նաև հոգեբանի աջակցություն ստանալու համար:

Վերջին 3 տարում այս առաքելությունն իր վրա է վերցրել «ԶՊՄԿ» բարեգործական հիմնադրամը: //

Արցախի ժողովուրդը ՀՀ ներկայիս իշխանություններին երբեք չի լիազորել իր անունից հանդես գալ ու պարզունակ գործարքի առարկա դարձնել Արցախը

«Վերջին օրերին Եվրոպական խորհրդարանում ու լրագրողների հետ հանդիպումներում Արցախի և Արցախյան շարժման վերաբերյալ տգիտության ու կեղծիքի վրա հիմնված փաշինյանական «դատողությունները» ոչ միայն հարուցել են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների միջոցով իրականացված Արցախի բռնազավթման հետ չհաշտվող մեր հազարավոր հայրենակիցների վրդովմունքը, այլև պահանջում են որոշ մեկնաբանումներ»,– նշված է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դանիելյանի հայտարարության մեջ:

- «Արցախյան շարժման վերաբերյալ անհեթեթ հայտարարությունները չեն կարող վարկաբեկել մեր ժողովրդի՝ հանուն ազատության ու խաղաղության հերոսական պայքարի այդ լուսավոր դրսևորումը:
- Որևէ երկրի՝ այդ թվում և Հայաստանի, իշխանության լիազորությունները սահմանափակվում են այդ երկրի սահմաններով: Այդ սահմաններից դուրս, այլ պետության (անկախ այն բանից՝ այն ճանաչված է, թե ոչ) տարածքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ գործողությունները (քրեական գործերի հարուցում և այլն), այդ պետության բնակչության իրավունքների վերաբերյալ «որոշումների» ընդունումը, ճակատագրի տնօրինումը միջազգային հիմնարար սկզբունքների կոպիտ ոտնահարում է և հանցագործություն: Արցախի ժողովուրդը ՀՀ ներկայիս իշխանություններին երբեք չի լիազորել իր անունից հանդես գալ ու պարզունակ գործարքի առարկա դարձնել Արցախը:
- Եթե եղածը խաղաղություն է, այլ ոչ թե բացարձակ և չընդհատվող կապիտուլյացիա, ապա ինչո՞ւ են ադրբեջանական զորքերը շարունակում մնալ ՀՀ բռնազավթված 240 քառակուսի կիլոմետր տարածքում, ինչո՞ւ էթնիկ զտումների ու ցեղասպանության ենթարկված 150000 արցախցիներ չեն վերադառնում հայրենի տներ, ինչո՞ւ Բաքվի բանտերից հայրենիք չեն վերադառնում հայ պատանդառուները, ինչո՞ւ են հիմնովին ոչնչացվում Արցախի հայկականության անժխտելի վկայությունները՝ հայկական բնակավայրերը, ծիսական շինությունները, պատմամշակութային հուշարձանները և այլն:
- Ղարաբաղյան շարժման էության և վերջին տարիներին Արցախի ժողովրդի նկատմամբ իրականացված էթնիկ զտումների ու ցեղասպանության իրականացման գործողությունների նենգափոխումն ու կեղծ «խաղաղությամբ» փաթեթավորումը Եվրոպական խորհրդարանի պատգամավորների առաջ, որոնք մի քանի տարի շարունակ ընդունել են Ադրբեջանի իրականացրած հանցագործությունները և Թուրքիայի մասնակցությունը դրանց դատապարտող բանաձևերը՝ արհամարհանք է այդ կառույցի նկատմամբ:
- Միջազգային իրավունքի լիակատար համապատասխանությամբ ու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ու բոլոր հեղինակավոր միջազգային կազմակերպությունների անվերապահ աջակցությամբ տասնամյակների իրականացված ինքնորոշման իրավունքի իրացման գործընթացի վերածումը «տարածքային վեճի», Ադրբեջանի քարոզչական թեզերի շարունակական վերարտադրությունը ՀՀ իշխանությունների կողմից միջազգային իրավունքի կոպիտ ոտնահարում է ու վերջին մի քանի տարում միջազգային ատյանների վերաբերմունքի արմատական փոփոխությունը պայմանավորված է ոչ միայն աշխարհաքաղաքական զարգացումներով, այլև ՀՀ իշխանությունների վերաբերմունքով Արցախի ու Արցախյան շարժման նկատմամբ:
- Մեզ համար զարմանալի չէ, որ Հայրենիք հասկացությունը չընկալողները, 1700-ամյա Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին ու ազգային հավատքը ուրացողներն ու ամբաստանողները, խարդավանքներով ու աճպարարություններով իշխանության աթոռները ձեռք բերածներն ու դրանք պետության հետ նույնականացնողները վարկաբեկում են ամեն սուրբ բան, այդ թվում և մեր ժողովրդի ինքնությունը ձևավորող մյուս հաստատություններն ու գործընթացները, այդ թվում և Արցախյան շարժումը:

Արցախի ժողովրդի՝ ինքնորոշվելու, հայրենիք վերադառնալու, անվտանգ ապրելու, սեփական ճակատագիրը տնօրինելու անօտարելի իրավունքը չի կարող վերանալ ստի, կեղծիքի ու նենգափոխումների միջոցով կամ դառնալ ճղճիմ գործարքների առարկա:

Որպես Արցախի ժողովրդի ընտրյալ կառույցի ներկայացուցիչ, հավաստիացնում եմ, որ շարունակելու ենք բոլոր օրինական միջոցներով ու գործիքակազմերով պայքարել Արցախի ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման ու իրացման համար՝ ունենալով Արցախի և արցախցիների խնդրով մտահոգ ուժերի և անհատների շարունակական, հզոր աջակցությունը»:

13.03.2026

Արցախ Միությունը զեկույց է ներկայացրել Մեծ Բրիտանիայի խորհրդարանի հետաքննությանը՝ Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման հարցով

Մեծ Բրիտանիայի խորհրդարանում պաշտոնապես մեկնարկած «Ջնջելով անցյալը. մշակութային ժառանգության ոչնչացում» (Erasing the Past: The Destruction of Cultural Heritage) խորհրդարանական հետաքննության շրջանակներում Արցախ Միությունը բարձրաձայնել է Ադրբեջանի կողմից իրականացվող ցեղասպանական քաղաքականության վերաբերյալ, ինչպես նաև հանդես է եկել ի պաշտպանություն Արցախի վտանգված պատմամշակութային ժառանգության:

Փետրվարի 23-ին կայացած անդրանիկ նիստին որպես հիմնական բանախոս ելույթ է ունեցել Արցախ Միության նախագահ Արտակ Բեգլարյանը: Իր ելույթում նա բրիտանացի խորհրդարանականներին և միջազգային իրավական փորձագետներին է ներկայացրել համակողմանի փաստեր Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման, Արցախի ժողովրդի բռնի տեղահանման ու ներկա վիճակի և հայ գերիների իրավունքների խախտման վերաբերյալ:

Արտակ Բեգլարյանն ընդգծել է միջազգային մշտադիտարկման ու կանխարգելիչ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն ադրբեջանական բռնազավթման ներքո գտնվող՝ Արցախի ժողովրդի ժառանգության ու սեփականության պաշտպանությանը՝ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի հրամաններին համապատասխան: Նա հատուկ անդրադարձ է ունեցել նաև Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի իրացման անհրաժեշտությանն ու միջազգային աջակցությանը՝ կարևորելով դրա նշանակությունը արդար, արժանապատիվ ու կայուն խաղաղության ապահովման համար:

Բացի Ա. Բեգլարյանի բանավոր վկայությունից, Արցախ Միությունը հաջորդիվ նաև Մեծ Բրիտանիայի խորհրդարանին և Փաստաբանների միջազգային ասոցիացիային է ներկայացվել Արցախ Միության և «Արցախի մշակույթի և զբոսաշրջության զարգացման գործակալություն» ՀԿ-ի համահեղինակությամբ պատրաստված համապարփակ զեկույցը՝ «Ադրբեջանի կողմից Արցախում հայկական մշակութային ժառանգության համակարգված ոչնչացումը և յուրացումը (2020-2026թթ.)» խորագրով:

Զեկույցը փաստագրում է հայկական եկեղեցիների, գերեզմանատների, հուշարձանների և թանգարանային հավաքածուների միտումնավոր ոչնչացումն ու յուրացումը՝ ներկայացնելով անհերքելի ապացույցներ առ այն, որ Ադրբեջանի գործողությունները կրում են ցեղասպանական բնույթ և նպատակ ունեն վերացնելու Արցախում հայկական հետքը և կանխելու բնիկ ժողովրդի վերադարձն իր հայրենիք:

Հետաքննությունն իրականացվում է Փաստաբանների միջազգային ասոցիացիայի, Մարդու իրավունքների ինստիտուտի (IBAHRI) աջակցությամբ և Մեծ Բրիտանիայի բազմակուսակցական խորհրդարանական խմբի կողմից՝ պատգամավոր Բրենդան Օ'Հարայի նախագահությամբ: Այն բաղկացած է լինելու հինգ փուլից, որոնց արդյունքում հրապարակվելու է վերջնական զեկույց՝ ուղղված Մեծ Բրիտանիայի կառավարությանն ու միջազգային դերակատարներին:

Արցախ Միության և Արցախի մշակույթի և զբոսաշրջության զարգացման գործակալության համահեղինակությամբ պատրաստված վերոնշյալ զեկույցի ամբողջական տարբերակին ծանոթանալ՝ artsakhunion.org հղմամբ: //

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ. «Հայաստանում չկան ընդդիմադիր ուժեր, որ կողմ լինեն պատերազմին և դեմ լինեն խաղաղությանը»

Հայաստանում չկան ընդդիմադիր ուժեր, որ կողմ լինեն պատերազմին և դեմ լինեն խաղաղությանը:
Դա չէ հարցը, դա Նիկոլ Փաշինյանի լարած թակարդն է ու նրա դեմագոգիան:
Չպետք է ընկնել նրանց թակարդը:
Հարցն այն է, որ այս իշխանությունը ձախողել է մեր երկրի անվտանգության ու պաշտպանության ապահովումը և ինչու է դա արել:
Սա հենց պատերազմ տանող ճանապարհն է, մեզ սպառնում են պատերազմով, ու պատերազմը դարձնում են ներպետական գլխավոր ընտրություններում գործոն:

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ

«Միասնության թևեր» քաղաքական նախաձեռնության 6 քայլը խաղաղության երաշխավորման համար

Քայլ 1. Կստեղծվի ՀՀ վարչապետին առընթեր ռազմական բարեփոխումների հանձնաժողով:

Քայլ 2. Մեր պաշտոնավարման առաջին տարվա ավարտին Հանձնաժողովի մշակած ծրագրի հիման վրա կապահովվի՝ զսպման լիարժեք կարողություններ, իսկ պաշտոնավարման առաջին ժամկետի ավարտին՝ ռազմական հավասարակշռություն:

Քայլ 3. Մինչև հանձնաժողովի կողմից ծրագրի մշակումը՝ օրենքով կսահմանվի, որ պաշտպանության ծախսերը չեն կարող ՀՆԱ-ի 8 տոկոսից պակաս լինել: Պաշտպանական ծախսերից տարեկան կես միլիարդ ԱՄՆ դոլար պարտադիր կուղղվի հայաստանյան ընկերություններից գնումների համար՝ արագացնելու համար մեր ներքին ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը:

Քայլ 4. Երկիրը մշտապես պատրաստ կլինի պաշտպանության, որովհետև պետությունը, հասարակությունը և տնտեսությունը կգործեն որպես մեկ համադրված համակարգ:

Քայլ 5. Ճշմարտության բացահայտման և պատասխանատվության սահմանման համար անմիջապես կհանրայնացվի 2016թ. քառօրյա և 2020 թ. 44-օրյա պատերազմների վերաբերյալ ԱԺ զեկույցները:

Քայլ 6. Կստեղծվեն խելամիտ սահմաններ ու թվային պաշտպանություն՝ ավտոմատացված ցանկապատով և մարդու անմիջական ներգրավման նվազեցմամբ: Կգործի եռաշերտ բանաձև՝ ավտոմատ հայտնաբերում իրական ժամանակում, ազդանշան, արագ արձագանք: Կստեղծվի տեղերում ակնթարթային որոշումներ կայացնելու կարողություններով օժտված բանակ: //

«Միասնության թևեր» քաղաքական նախաձեռնության տնտեսական ծրագրի կարևոր դրույթները

Հայաստանը դարձնելու ենք արտադրական և տեխնոլոգիական պետություն:

- Ստեղծելու ենք արդյունաբերական գոտիներ, ապահովելու ենք ոչ միայն արդյունաբերական աճ, այլև տարածքային համաչափ զարգացում:
- Արդյունաբերական գոտիների համար սահմանելու ենք գրեթե զրոյական հարկային համակարգ՝ պարզ վարչարարությամբ:
- Գյուղատնտեսության ոլորտում ստեղծելու ենք ամբողջական շղթա՝ հողից մինչև պատրաստի արտադրանք: Գյուղացին չպետք է իր բերքը մթերելու կամ արտահանելու խնդիր ունենա:
- Ներդնելու ենք համաչափ հարկային համակարգ՝ բիզնեսին խրախուսելու, այլ ոչ թե պատժելու համար:
- Նախքան հարկային բարեփոխումների մեկնարկը վերականգնելու ենք մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող հարկային իրավակարգավորումները:
- Շրջանառության հարկը և ԱԱՀ-ն վերացնելու ենք՝ փոխարենը ներդնելով պարզ, կանխատեսելի և նվազ՝ 5 տոկոս դրույքաչափով հարկ:
- Շահութահարկն ու եկամտահարկը դարձնելու ենք առավելագույնս համաչափ՝ բերելով սոցիալական համերաշխություն և արդարություն:
- Բիզնեսին տալու ենք բորսայական կապիտալին պարզեցված հասանելիություն. աճող տնտեսությունը պետք է ունենա սեփական կապիտալ, ոչ թե միայն պարտքային ֆինանսավորում:
- Վերահմաստավորելու ենք բաժնետիրական ընկերությունները՝ արժեթղթերի շուկան և քաղաքացիների ներդրումային ակտիվությունը խթանելու համար:
- Բաժնետիրական ընկերությունները շահութահարկ կվճարեն, երբ շահույթը բաշխվի որպես դիվիդենտ:
- Սփյուռքն այլևս չի լինելու նվիրատու, այլ տնտեսության կառուցման համահեղինակ, համասեփականատեր, իսկ Հայաստանը՝ գլոբալ հայկական տնտեսության կենտրոն:
- Ներդնելու ենք թվային դրամը՝ պետական ֆինանսների հետագծելիությունը, թափանցիկությունը և վերահսկելիությունն ապահովելու համար: //

«Միասնության թևեր» նախաձեռնության քաղաքական ծրագրի կարևոր դրույթները՝ պետական կառավարման, դատաիրավական և ընտրական համակարգերի վերաբերյալ

Պաշտոնն այլևս չի լինելու իշխանություններին ծառայելու դիմաց տրվող նվեր կամ հիփոթեքը մարելու միջոց:

- Պաշտոնի նշանակվելու է միայն նա, ով ունի գիտելիք, փորձ, կարողություն և նվիրում:
- Հայաստանը չի սկսվելու և վերջանալու Երևանով. Հայաստանի մարզերն ու համայնքները պետք է զարգանան համաչափ, կայուն և ինքնուրույն:
- Դատարանները չեն ունենա կախվածություն որևէ իշխանությունից, գործարարից կամ քաղաքական ուժից:
- Իրավապահ ծառայողները չեն լինի «վարկերի և պարգևավճարների գերիներ», որպեսզի հնարավոր չլինի քաղաքական ճնշում գործադրել նրանց վրա:
- Կայուն մեծամասնության մեխանիզմը փոխվելու է: Ընտրողը միշտ ունենալու է ընտրելու հնարավորություն, եթե անգամ դեմ է բոլորին:
- Նախագահին ընտրելու է ժողովուրդը, ունենալու է ընդլայնված լիազորություններ:
- Մենք պաշտպանելու ենք արցախահայերի վերադարձի իրավունքի ապահովումը:
- Մենք չենք հրաժարվելու միջպետական հայցերից. դրանցով մեր երկրի համար շահավետ բանակցային դիրք ենք ապահովելու: //

Ռոբերտ Ղուկասյանն այլևս ավելո՞րդ է Սյունիքում. ո՞վ կլինի հաջորդ մարզպետը

Իշխող քաղաքական ուժը ներկուսակցական քվեարկությամբ հստակ և դաժան դիրքորոշում արտահայտեց Սյունիքի մասով...

Նախ՝ մերժվեցին կուսակցության նախընտրական ցուցակում ընդգրկվելու համար հայտ ներկայացրած մարզպետարանցիները՝ Նարե Ղազարյան, Հայկ Հարությունյան, Էդգար Մարտիրոսյան, Կարեն Բալայան, Նվարդ Հարությունյան, Սուրեն Քեսեջյան...

Թվում էր, թե սեփական թիմի մերժմանը բախված մարզպետը կամաչի կամ արժանապատվության զգացում կունենա և ճամպրուկները կհավաքի, բայց...

Համաձայնվեց, որ իր անունը ներառվի 274 հավակնորդի անուն-ազգանունն ընդգրկող ցուցակի մեջ ու դրվի քվեարկության...

Արդյունքում ստացավ ցուցակում ընդգրկված մարզպետներից ամենացածր ցուցանիշը՝ 132 քվե: Պատկերացնո՞ւմ եք՝ քվեարկությունը կատարում էին մոտ 1100 ընտրիչ, ընդ որում՝ յուրաքանչյուր ընտրիչ մինչև հիսուն քվե տալու իրավունքով: Ու նման պայմաններում՝ իբրև Սյունիքի մարզպետ ներկայացող անձնավորությունը ստացավ շատ քիչ մարդկանց վստահությունը:

Ինչո՞ւ այդպես ստացվեց:

Ըստ ՔՊ կուսակցության մեր աղբյուրների՝ քաղաքական այդ ուժի գլխամասում ի վերջո եկել են համոզման, որ Սյունիքի մարզպետի աթոռը չորս տարի զբաղեցնող անձնավորությունն այդպես էլ չկարողացավ ինտեգրվել մարզի հանրությանը և բնակչության մեծագույն մասի համար մնաց իբրև օտար, անցավոր, պատահական մի անձնավորություն (ազդեցության ոլորտների համար իրար մազեր փետող երեք կինը, երկու-երեք պատանդ իշխանավորը, կրթօջախի տնօրենները հաշվի մեջ չեն): Ավելին՝ հրի ու սրի դեմ հայտնված Սյունիքի որևէ հիմնախնդրի վերաբերյալ չորս տարվա ընթացքում այդ պարոնը երբևէ սեփական կարծիք չհայտնեց: Մյուս կողմից՝ չորս տարվա ընթացքում ձեռնարկվեցին հնարավոր բոլոր միջոցները՝ մարզում անհամերաշխություն սերմանելու, հանրությունը բաժան-բաժան անելու, մարզի երևելի ու աշխատող դեմքերին վարկաբեկելու ուղղությամբ:

Եվ, իհարկե, հարց է ծագում՝ ՔՊ-ն նրա հետ կգնա՞ ընտրությունների: Պարզվում է սակայն, որ մարզպետարանում չեն էլ սպասում այդ հարցի պատասխանին. ստացվող տեղեկությունների համաձայն՝ այնտեղ արդեն իսկ խուճապ է: Տարիներով մարզպետարանում ծվարած ձրիակերների հայտնի խումբը, օրինակ, վախենում է, որ հաջորդ մարզպետն իրենցից աշխատել կպահանջի...

Նույն աղբյուրից ստացված տեղեկությունների համաձայն՝ խուճապ է նաև կրթօջախի տնօրենների փաղանգում. հատկապես հայտնի կիսագրագետները վախենում են, որ գալիք մարզպետը չի ուզենա առիթանառիթ լուսանկարվել իրենց հետ կամ չի պահանջի (որպես հավատարմության նշան) հավանելու նշաններ դնել իր լուսանկարի ներքո և աշխատանք կպահանջի...

Առնետավագքի որոշ դափնեկիրներ էլ արդեն փորձում են տարածություն պահպանել հեռացող մարզպետից, որպեսզի օր առաջ և ամպոտ ոտքերով հայտնվեն նորանշանակի կողքին:

Այդ բոլորով հանդերձ, խոստովանենք, այնքան էլ կարևոր չէ, թե մարզպետարանում և մերձակայքում ինչ զորաշարժեր են տեղի ունենում: *Կարևորն այն է, թե ով կլինի Սյունիքի հաջորդ մարզպետը:*

Ոմանք կարծում են՝ եթե ԱԺ ՔՊ-ական (սյունեցի) պատգամավորներից պիտի որևէ մեկը նշանակվի՝ ավելի լավ է երկու-երեք ամիս էլ հանդուրժել գործող մարզպետի բացակա ներկայությունը:

Շատերն էլ ոչ թե անուն-ազգանուն են հնչեցնում, այլ չափորոշիչներ մատնանշում՝ ի՞նչ որակներով օժտված պիտի լինի Սյունիքի ապագա մարզպետը: Օրինակ, Սյունիքի ապագա մարզպետը չպետք է բանսարկությամբ զբաղվի...

Սյունիքի ապագա մարզպետը պետք է կարճ ժամանակաընթացքում վերականգնի մարզպետարանի զրոյացած վարկանիշը և հնարավորինս արագ մաքրի մարզպետարանի ու կրթական հաստատությունների ավգյան ախոռները:

Սյունիքի ապագա մարզպետը պետք է իր վարքով ու գործով՝ հայոց անկախ պետության ու պետականության հանդեպ հարգանք ու պատկառանք ներշնչի և ոչ թե ատելություն:

Ու նման այլ չափորոշիչներ...

Իսկ թե երբ կառավարությունը կընդունի այլևս հասունացած որոշումը՝ դժվար է ստույգ ասել: Չի բացառվում, որ խնդրի լուծումը տեղի ունենա ԱԺ ընտրություններից հետո՝ նույնիսկ ներկայիս կառավարության կամքից անկախ: Մի հանգամանք, սակայն, ակնհայտ է. գործող մարզպետին Սյունիքում տեսնող հազարավոր ընտրողներ դժվար թե հունիսի 7-ին քվեարկեն իշխող քաղաքական ուժի օգտին: //

Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինին

Ամենարգո պարոն Մորթեզա Աբեդին Վարամին

«Սյունյաց երկրի» խմբագրակազմի, ընթերցողների, հետեւորդների եւ անձամբ իմ սրտաբուխ շնորհավորանքն եմ փոխանցում Ձեզ՝ իրանական Ամանորի՝ Նովրուզի առիթով:

Իրանական օրացույցի տարվա սկիզբ եւ գարնան առաջին օր համարվող տոնը եւս մեկ առիթ է բարձրաձայնելու՝ հազարավոր սյունեցիների համար շատ թանկ է հայ-իրանական բարեկամությունը, Իրանի Իսլամական Հանրապետության լինելիությունը:

Դա է պատճառը, որ մենք Իրանի բարեկամ ժողովրդի համար ծանրագույն ու բախտորոշ այս օրերին, մշտապես աղոթում ենք Իրանի Իսլամական Հանրապետության հաղթանակի համար, որը, համոզված ենք, անխուսափելի է:

Մենք ուշադրությամբ հետեւում ենք տեղի ունեցող ռազմական գործողություններին եւ հպարտություն ապրում, որ Իրանի քաջարի ժողովուրդն ու Իրանի հզոր պետությունը կարողանում են արժանապատիվ պատասխան տալ իր երկրի անկախության եւ ինքնիշխանության դեմ սուր բարձրացրած Միացյալ Նահանգներին եւ Իսրայելին:

Հույս ունենք, որ Նովրուզը՝ նոր կյանք եւ զարթոնք խորհրդանշող տոնը, հավելյալ ուժ կհաղորդի իրանական ժողովրդին՝ չարի դեմ մղվող պատերազմում:

Հույս ունենք միաժամանակ, որ Իրանի հաղթանակով հօդս կցնդի «Ձանգեզուրի միջանցք» անվամբ թուրք-ադրբեջանական դարավոր բաղձանքը՝ «ԹՐԻՓՓ» կեղծանվամբ փաթեթավորված, որի հակահայկական եւ հատկապես հակասյունիքյան ուղղվածությունն այլեւս անհնար է չտեսնել:

Պինդ կացեք եւ մի մոռացեք՝ չարը միշտ էլ պարտվում է:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
22 ՄԱՐՏԻ 2026 Թ.

Աբրահամ Սրբազանն ազատվել է Վայոց ձորի թեմական առաջնորդի պաշտոնից և կոչվել հանգստյան

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ մարտ 16, 2026 թվակիր հայրապետական տնօրինությամբ Վայոց Ձորի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը ազատ է կացուցվել թեմական առաջնորդի պաշտոնից և կոչվել հանգստյան՝ իր գրավոր և բանավոր դիմումների հիման վրա:

Հայրապետական տնօրինությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար եպիսկոպոս Հակոբյանը համատեղության կարգով նշանակվել է Վայոց Ձորի թեմի առաջնորդական տեղապահ՝ իրականացնելու թեմական առաջնորդի պարտականությունները:

Հիշեցնենք՝ Աբրահամ Սրբազանը միացել էր եկեղեցու դեմ արշավ հայտարարած Նիկոլ Փաշինյանի «բարենորոգման» շարժմանը:

16.03.2026



16 մլն դրամ՝ սահմանամերձ գյուղական բնակավայրում տուն կառուցելու համար. ծրագիրը կվերաբացվի

Սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում ընտանիքներին տրամադրվում է 16 մլն դրամ՝ սահմանամերձ գյուղական բնակավայրում տուն կառուցելու համար, կվերաբացվի. նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման e-draft իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում (հղում՝ https://www.e-draft.am/projects/9802):

Ծրագրից կկարողանան օգտվել՝

- 2025 թ. մայիսի 1-ի դրությամբ շինարարության թույլտվություն ստացած կամ հողամաս ձեռք բերած և ծրագրի գործող պայմաններին բավարարող ընտանիքները,
- շահառուները, որոնք տունը կկառուցեն այն սահմանամերձ բնակավայրերում, որտեղ բնակչության և շահառուների թվի հարաբերակցությունը փոքր է 10%-ից՝ ապահովելով 10%-ի ցուցանիշը: Ընդ որում՝ յուրաքանչյուր բնակավայրի համար նախատեսված քվոտաների նվազագույն թիվը 10 է. բնակավայրերի ցանկը Սյունիքի մարզում՝ Բարձրավան (մինչև 10), Խնձորեսկ (մինչև 12), Շուռնուխ (մինչև 10), Որոտան (մինչև 10), Բարգուշատ (մինչև 10), Գեղանուշ (մինչև 10), Գոմարան (մինչև 10), Դավիթ Բեկ (մինչև 16), Դիցմայրի (մինչև 10), Եղվարդ (մինչև 10), Խդրանց (մինչև 10), Ծավ (մինչև 10), Կաղնուտ (մինչև 10), Ճակատեն (մինչև 10), Ներքին Հանդ (մինչև 10), Շիկահող (մինչև 10), Սզնակ (մինչև 10), Սյունիք (մինչև 10), Սրաշեն (մինչև 10), Վարդավանք (մինչև 10), Ուժանիս (մինչև 10), Խոտ (մինչև 10), Արավուս (մինչև 10), Խնածախ (մինչև 19), Խոզնավար (մինչև 10), Կոռնիձոր (մինչև 19), Վաղատուր (մինչև 10), Տեղ (մինչև 25), Քարաշեն (մինչև 10),
- շահառուները, որոնք տունը կկառուցեն այն բնակավայրերում, որտեղ կառուցված/կառուցվող դպրոցներում ազատ տեղերը գերազանցում են 50%-ը՝ ապահովելով ազատ տեղերի 20%-ի չափով համալրվածություն: Ընդ որում՝ յուրաքանչյուր բնակավայրի համար նախատեսված քվոտաների նվազագույն թիվը 10 է (բնակավայրերի ցանկը՝ Տավուշի մարզի Դովեղ (մինչև 10), Կայան (մինչև 4), Կիրանց (մինչև 10), Սևքար (մինչև 10), **Սյունիքի մարզի Խնձորեսկ (մինչև 4), Հարթաշեն (մինչև 10), Քարահունջ (մինչև 10), Ագարակ (մինչև 10), Ծավ (մինչև 4), Սյունիք (մինչև 4), Խոտ (մինչև 10), Խնածախ (մինչև 4), Կոռնիձոր (մինչև 4), Տեղ (մինչև 4),** Արարատի մարզի Պարույր Սևակ (մինչև 10), Վայոց ձորի մարզի Արենի (մինչև 10) բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) նպատակով դիմած շահառուների համար, եթե շահառուներն ունեն առնվազն մեկ՝ 10 տարին չլրացած երեխա, ինչպես նաև շահառու ամուսինները չունեն անձնական կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակելի անշարժ գույք կամ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք Երևան քաղաքում: //

ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՀԱՅԱՑՔ ԱՆՑՅԱԼԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԻՆ

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿԻ. «Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայրը, հնարավոր չէ պաշտպանել՝ առանց Արցախին տիրելու»

1919 թ. ռուս գրող, հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին "Кавказское слово" ամսագրում տպագրել է «Ղարաբաղ» հոդվածը, որն այսօր էլ ապշեցնում է իր արդիականությամբ ու հրատապությամբ:



Յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր ազգ ունի իր նվիրական ամրությունները: Երբ ժողովրդի պատմությունը բարեհաջող ընթացք է ստանում, դրանք վերածվում են մշակութային ու քաղաքական կյանքի առանցքի: Երբ ճակատագիրը հետապնդում է ազգին, այն դառնում է ազգային կյանքի պատվարը, հույսի կղզին, վերածննդի գրավականը: Հայ ժողովրդի համար հենց այս վերջին դերն է ունեցել և շարունակում ունենալ Ղարաբաղ լեռնային շրջանը: Բնությունն ինքը հսկայական նշանակություն է տվել նրան: Այնտեղ՝ Ղարաբաղի անմատչելի բարձունքներում, որոնք Կարսի ու Սևանի լեռնաշղթաների շարունակությունն են, ավելի քան 2000 տարի հայ ժողովուրդը դիմակայում էր քոչվոր ցեղերի ճնշումներին՝ պահպանելով իր մշակույթը, իր ազգային դիմագիծը:

Ազգագրական առումով, տնտեսությամբ ու լեզվով միատարր լինելով՝ Ղարաբաղը Հայաստանի միջնաբերդն է դարձել, նրա արևելյան թևը: Այդպիսին էր նա անցյալում, այդպիսին է հիմա, այդպիսին կլինի ընդմիշտ, քանի որ Հայաստանի սիրտը, Արարատյան դաշտավայրը չի կարելի պաշտպանել՝ առանց տիրելու Ղարաբաղին: Դարերի ընթացքում ներխուժումների ալիքները բազմիցս են փշրվել Ղարաբաղի ժայռերին՝ ներթափանցելով միայն գետահովիտներով, այստեղ էլ, սակայն, երկար չեն մնացել: Սյունիքի մելիքությունը, ինչպես կոչվել է Ղարաբաղը հնում, մեկ անգամ չէ սեփական ուժերով դիմադրել թշնամուն: Պատմությունը կրկնվում է, ու վերջին անգամ դրա ականատեսները մենք ինքներս էինք:

Բնությունն ու պատմությունը կերտել են ղարաբաղցու վառ արտահայտված տեսակը: Աշխարհով մեկ սփռված ղարաբաղցիներին ամենուր կարելի է հեշտությամբ ճանաչել: Գործունեության մեծ թափ, անձնուրաց քաջություն, ռիսկի դիմելու հակում, ինքնավստահություն, յուրատեսակ համառություն, շիտակ հաստատամտություն, ընտանեկան կենցաղում՝ նահապետական. ահա ղարաբաղցու համակրելի գծերը, որոնք ասես հայկական հնագույն առաքինությունների խտացումը լինեն՝ պատմության դաժանություններից ինչ-որ տեղ խամրած ու իրենց անաղարտ վիճակում Ղարաբաղում պահպանված: Վեհանձն, ամրակազմ մարդիկ, ովքեր կյանքը փրկելու համար ծվարել են լեռներում, կոփվել լեռնային օդում ու անվնաս մնացել վարակներից, որոնց ենթակա են հարթավայրում ապրողները:

Հայաստանի ազգային հիշողությունն իր մեջ պետք է որ ղարաբաղցիների ոչ քիչ կարկառուն անուններ ամփոփած լինի: Չկա մի բնագավառ, որտեղ նրանք չդրսևորեին իրենց նախաձեռնողականությունն ու տաղանդը: Քաղաքականություն, գրականություն, հասարակական գործունեություն, առևտուր՝ այս ամենը նրանց համար գործունեության ասպարեզ էր ծառայում: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, սակայն, չհավակնելով ամբողջ պատկերը ներկայացնելուն, հիշենք միայն մի քանի անվանի ղարաբաղցիների, որոնց անունները հայտնի են բոլորին. հասարակական գործիչներից իրենց ծննդով Ղարաբաղին են պարտական Արամ Փաշան (Մանուկյանը), Սաքո Սահակյանը, ռազմի գործին Ղարաբաղը տվել է գեներալ Լազարևին, արդյունաբերությունը նույնպես իր շարքերում ոչ քիչ ղարաբաղցիներ է ունեցել՝ ղարաբաղցի էր, օրինակ, Կոստյա Համբարձումյանը: Գրականության մեջ նույնպես ղարաբաղցիներ շատ կային: Լեոն, Մոսկվայում «Արմյանսկի վեստնիկ»-ի հրատարակող Ամիրովը, վերջապես, հայկական թերթերի մեծ մասը խմբագրում են ղարաբաղցիները: Աշխարհին այդքան հայտնի տղամարդ գործիչներ տված Ղարաբաղը կերտել կամ, ավելի ճիշտ, իր անաղարտ վիճակում պահպանել է նաև հին հայուհու կերպարը, ում հոգեբանության ու կենցաղի մեջ շատ բան է անխաթար մնացել հայրիշխանության շրջանից: Իր մշակույթով ու կենցաղով հղկված՝ Ղարաբաղը մեր օրերում էլ չի արատավորել իր հնամենի փառքը: Ինչպես Թամերլանի ժամանակներում, հավաքելով իրենց ջոկատները, մելիքները պաշտպանեցին Ղարաբաղի անկախությունը: Շուշիի դրվագը չփոխեց Նուրի Փաշայի պարտության ընդհանուր պատկերը, և պաշտպանական գիծը հիմնականում անմատչելի մնաց, ինչպես նախկին ներխուժումների ժամանակ:

Այդպիսին է Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Անկասկած, եթե նա կորցներ այդ նշանակությունը, ազգերի ինքնորոշման գաղափարը մեծապես կտուժեր: Եվ հակառակը՝ տիրելով Ղարաբաղին, Հայաստանը զորավոր մշակութային ուժի այնպիսի առատ ներհոսք կստանա, որը, ողողելով Հայաստանի ամայի տարածքները, կբեղմնավորի դրանք մշակույթով՝ այդպիսով իսկ ամբողջացնելով Ղարաբաղի բազմադարյա փառապանծ պատմությունը:

Յուրաքանչյուր ժողովուրդ հիմա իրենն է փնտրում: Վերածնված ազգերի ողջ ապագան կախված է նրանից, թե արդյոք նրանք իրենց մեջ բավարար քանակի, այսպես ասած, ազգային մշակույթի թթխմոր կգտնեն: Նման պայմաններում բոլոր կենտրոնները, որտեղ այս կամ այն պատճառներով թանձրացել է մշակութային կյանքը, բացառիկ նշանակություն են ձեռք բերում: Այդպիսին է և Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Ճիշտ է, պատմությունը Հայաստանին ձգել է դեպի հարավ՝ դեպի տաք ծովը, և, հնարավոր է, այնտեղից կհորդեն այնպիսի ուժեր, որոնք Ղարաբաղը կվերածեն նոր Հայաստանի հյուսիսային ծայրամասի: Բայց այդ դեպքում էլ այն չի կորցնի իր նշանակությունը՝ որպես անձեռնմխելի ու դարերով թրծված մշակութային շտեմարան:

//

Նշվեց Ա. Գրիբոյեդովի անվան գրական ակումբի առաջին տարին

Մեկ տարվա ընթացքում ավելի քան 50 միջոցառում, քննարկումներ, ընթերցումներ և թարգմանություններ. Կապանում գործող Ա. Գրիբոյեդովի անվան գրական ակումբը փորձում է ձևավորել ակտիվ գրական միջավայր:

Պոեզիայի համաշխարհային օրվան ընդառաջ՝ «Ծիածան» ՀԿ առաջնորդների կրթական կենտրոնում, ամփոփվեց ակումբի առաջին տարվա գործունեությունը:

Հանդիպման կազմակերպիչ Լյուդմիլա Աղախանյանը նշում է. **«Մենք ոչ միայն միջոցառումներ ենք անցկացրել, այլև փորձել ենք ստեղծել քննարկման մշակույթ, որտեղ մարդիկ նոր իմաստներ են բացահայտում»:**

Լ. Աղախանյանը կարևորում է նաև ակումբի անվան ընտրությունը՝ նշելով, որ Ա. Գրիբոյեդովը միավորում էր գրականությունն ու դիվանագիտությունը:

Միջոցառմանը ներկա էին ավելի քան 40 հյուր, այդ թվում՝ Կապանում ՌԴ գլխավոր հյուպատոսության բացման հարցերով առաջատար խմբի ղեկավար Վլադիմիր Չերտկովը և «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը, ովքեր իրենց ելույթներում շեշտեցին նման նախաձեռնությունների կարևորությունը մարզային մշակութային կյանքի ակտիվացման գործում:

Լ. Աղախանյանի խոսքով՝ ակումբի գործունեությունը չի սահմանափակվել միայն հանդիպումներով: Կազմակերպվել են նաև շրջագայություններ, անգամ Մեղրու սահմանապահ զորամաս են այցելել, ակտիվ մասնակցություն ունեցել տարբեր մշակութային նախաձեռնությունների և համատեղ նշել ավանդական տոները:

Միջոցառման ավարտին՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակին նվիրված մրցույթի մասնակիցները պարգևատրվեցին «Ռոսիա» և «Ռոսիանե» ՀԿ-ների շնորհակալագրերով:

Նման նախաձեռնությունները, մասնակիցների համոզմամբ, կարևոր դեր ունեն մարզերում գրական և մշակութային կյանքի ակտիվացման գործում:

ԻՋԱ ԱՍՓԱՏՐՅԱՆ

Մելանյա Մարտիրոսյանի մասին՝ հոբելյանի առիթով

Մեր հանդիպումը տեղի ունեցավ պարի փորձասենյակում: Տակավին երիտասարդ, մրահոն, հմայիչ աղջնակը գրավեց ուշադրությունս: Գրավիչ ժպիտ ուներ, սլացիկ նուրբ իրան: Պարի խմբի ղեկավար Բորիկ Հարությունյանը ծանոթացրեց (փորձը նոր էր ավարտվել, և ամենայն պատասխանատվությամբ կարգի էր բերում սենյակը). **«Մելանյան է, իմ լավագույն պարուհին և օգնականը»**: Քանի որ ժամանակին պարուհի եմ եղել, հայացքներով փոխանակվեցինք, և մի տաք հոսանք անցավ մեր միջով: Ժպտացինք իրար, և դա եղավ մեր բարեկամության սկիզբը...

Դա 1983 թվականին էր. սկսվեց երկար տարիներ ձգվող ստեղծագործական ճանապարհը, որի գլխավոր դերակատարը Մելանյա Մարտիրոսյանն էր:

Կապանի մշակույթի պալատի պարի անսամբլը երեք տարիքային խումբ ուներ՝ ավագ, միջին և փոքր: Մելանյան անսամբլի առաջատար պարուհին էր, բայց, միաժամանակ, միջին և փոքր խմբերի փորձավարը:

Շատ ժամանակ չունեինք, առջևում փառատոն էր՝ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 40-ամյակին նվիրված, բազմաթիվ համերգներ լեռնագործների մոտ՝ Կապանի և Քաջարանի հանքերում, գյուղերում և յայլաղներում: Աշխատում և փորձեր էինք անում օր ու գիշեր:

Գլխավոր հանդիսությունը Համամիութենական փառատոնն էր՝ նվիրված հաղթանակի 40-ամյակին: Պարզվեց՝ պատշաճ ներկայանալու համար պարի համապատասխան հագուստներ՝ տարազներ չունեինք:

Շատ մեծ դժվարությամբ Երևանի «Նոր տարազ» կարի արտադրամասում հանձն առան՝ կարճ ժամանակահատվածում կարել ազգային տարազները:

Հիշում եմ Մելանյայի ուրախությունը, երբ առաջին անգամ փորձասենյակում փորձեց Զանգեզուրի տարազը: Բոլորս՝ ես, Բորիկ Հարությունյանը, Մելանյան, Աշոտը (Խուշին) և խմբի մնացած անդամները կանգնել էինք փորձասենյակում, և մեզ թվում էր՝ աշխարհի երջանիկներն ենք, քանի որ մինչ այդ պահը Կապանում ոչ մի պարի խումբ ազգային հագուստ չէր ունեցել:

Անսամբլը բազմաթիվ հաղթանակներ գրանցեց համամիութենական և հանրապետական մրցույթ-փառատոներում, ստացավ «Ժողովրդական կոլեկտիվ» բարձր կոչումը:

Այդ հաղթանակներում պարուհի-փորձավար Մելանյան ուներ իր մեծ ներդրումը:

Ժամանակն էր մասնագիտական կրթություն ստանալու: Մելանյան ընդունվում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի պարային բաժինը՝ պարային խմբի ղեկավարի մասնագիտությամբ:

Ուսումնառության տարիներին Հայաստանի պարարվեստի մեծերի հետ անմիջական շփումը, նրանցից առած դասերը ստեղծագործական մեծ ճանապարհի սկիզբն էին: Վանուշ Խանամիրյան, Սուրեն Չանչուրյան, Ֆրունզե Ելանյան, Արտյուշա Կարապետյան, Ռաֆիկ Պողոսյան, Լյուդմիլա Վիկտորովնա Սիմանովա, Տատյնա Բորիսովա. ահա պարարվեստի այն աստղերը, որոնց դպրոցի միջով անցավ նա և հղկվեց: Մասնագիտական կարողությունները և հմտությունները քայլ առ քայլ զարգացնելով՝ փորձեց սեփական հմտությամբ տարբեր պարային խմբերում և կոլեկտիվներում բեմադրություններ անել. Երևանի ժամացույցի գործարանի մշակույթի պալատի «Չարթուցիչ» մանկական պարի անսամբլ, Արարատյան գոտու ուսանողական ջոկատի «Նազելի-86» աղջիկների պարի խումբ...

1986 թվականին Մելանյան վերադառնում է Կապան և նշանակվում Կապանի արվեստի

մանկական դպրոցի պարարվեստի բաժնի դասատու, այնուհետև՝ բաժնի վարիչ՝ մինչև 2003 թվականը: Զուգահեռաբար՝ 1990 թվականին Կապանի մշակույթի պալատում, 1997 թվականին՝ Քաջարանի մշակույթի պալատում և թիվ 27 գիշերօթիկ դպրոցում հիմնադրում է պարի ստուդիաներ: Բազմաթիվ սաներ հենց այդ ստուդիաներում են կրթվել, հայեցի դաստիարակվել, ծանոթացել հայ պարարվեստի մշակույթին, հայկական պարի միջոցով դարձել հայրենիքի պահապան ուստրեր և դուստրեր:

2001-2016 թվականներին Կապանի մշակույթի պալատում գլխավորում է իր իսկ հիմնադրած «Զանգեզուր» պարի մանկապատանեկան ստուդիան, որի սաները համաքաղաքային և մարզային համերգների, փառատոների մասնակիցներ էին, հանրապետական մրցույթ-փառատոների հաղթողներ և մրցանակակիրներ՝ «Բարեկամության կամուրջներ 2004, 2005, 2006», «Վանուշ Խանամիրյանի անվան միջազգային փառատոն» և «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոն:

2007 թվականին Կապանը տոնում էր քաղաքի կարգավիճակ ստանալու 70-ամյա հոբելյանը: Տոնակատարության ստեղծագործական խմբում Մելանյա Մարտիրոսյանը պատասխանատու էր պարի խմբերի մասնակցության համար: Մենք զգում էինք, որ ինչ-որ բան պակասում է տոնակատարությունն ավելի շքեղ դարձնելու համար: Հենց նրա առաջարկով զանգահարում ենք Երևան՝ «Բերդ» պարի անսամբլի ղեկավար Կարեն Գևորգյանին, ով Մելանյայի կուրսընկերն էր: Չնայած մեծ զբաղվածությանը՝ Կարեն Գևորգյանը տալիս է իր համաձայնությունը, մնացածը կազմակերպական հարցեր էին, որոնք լուծվեցին մշակույթի նախարարության հետ: Անսամբլը Կապանում էր, և այն տոնակատարության զարդը դարձավ...

2008-2013 թվականներին ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի» Սյունիքի մարզի պարարվեստի մեթոդիստ-մանկավարժն էր: Ծրագրի շրջանակում հիմնվում են Մեղրիի և Քաջարանի արվեստի մանկական դպրոցների պարարվեստի բաժինները:

2011 թվականին Կապանի արվեստի պետական քոլեջում բացվում է պարարվեստի բաժին, որտեղ էլ նշանակվում է պարարվեստի դասախոս:

2008 թվականին բացվում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը, կուրս է բացվում նաև Կապանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնին կից, որտեղ պարարվեստի դասախոս է նշանակվում Մելանյա Մարտիրոսյանը:

Հենց այդ կուրսի հետ բեմադրվում է «Երկիր մոլորակը մեր տունն է» էպիկական ներկայացումը (ռեժիսոր՝ Ս. Մարտիրոսյան, պարերի բեմադրիչ՝ Մ. Մարտիրոսյան):

2017 թվականին Քաջարանում հիմնադրվում է «Զանգեզուր» պարարվեստի ստուդիան, 2020 թվականին՝ «Նռանե» պարի համույթը. գեղարվեստական ղեկավար՝ Մելանյա Մարտիրոսյան: «Նռանե» պարի համույթի հետ սկսվում է մի նոր շրջափուլ: Համույթը դուրս է գալիս Հայաստանի սահմաններից և մասնակցում 2022 թվականի դեկտեմբերին «Պրահայի աստղեր» միջազգային մրցույթ-փառատոնին՝ ստանալով առաջին կարգի մրցանակ:

Մենապարուհի Սառա Ստեփանյանը 2023 թվականի մարտին մասնակցում է «Փարիզի աստղեր» միջազգային մրցույթ-փառատոնին և ստանում առաջին կարգի մրցանակ: 2023 թվականի ապրիլին մասնակցում է Եվրոպայի «Երիտասարդ տաղանդներ» միջազգային մրցույթ-փառատոնին՝ Բարսելոնում ստանալով երկրորդ կարգի մրցանակ: 2023 թվականի սեպտեմբերին մասնակցում է «Մշակութային պարտեզ» միջազգային փառատոնին, Վիլնյուսի 700-ամյակին նվիրված կառավարական համերգին՝ Կաունասում: 2023 թվականի դեկտեմբերին մասնակցում է Կաունասի հայկական համայնքի 30-ամյակին նվիրված հոբելյանական համերգին:

Հաշվի առնելով Մելանյա Մարտիրոսյանի մասնագիտական բարձր կարողությունները՝ 2025 թվականի դեկտեմբերին Կաունաս քաղաքում անցկացվող միջազգային մրցույթ-փառատոնի ժյուրիի անդամ է և վարպետաց դասեր է անցկացնում Լիտվայի հայկական պարային խմբերի հետ:

2023-ից «Արթ Մյուզիք» միջազգային մրցույթ-փառատոնի ժյուրիի հանձնախմբի անդամ է:

2005 թվականից ՀՀ պարարվեստի գործիչների միության անդամ է:

2024 թվականի հունվարից Կապանի արվեստի պետական քոլեջի պարարվեստի բաժնի դասախոս է:

Ճանապարհը շարունակվում է...

– Ովքե՞ր են հանդիսացել ներշնչանքի աղբյուր պարարվեստում, ո՞րն է այն նշաձողը, որին ձգտել ես,- հարցնում եմ Մելանյային:

– Հայաստանի հանրապետության վաստակավոր արտիստներ, ՀՀ պարի պետական անսամբլի մենակատարներ Սոֆի Դևոյանը, Սրբուհի Բաբայանը, Կարինե Ղազարյանը, Աիդա Հարությունյանը և անսամբլի ղեկավար Վանուշ Խանամիրյանը:

– Ովքե՞ր են շարունակում գործդ:

– Արգինե Գևորգյանը մասնագիտական կրթություն ստանալուց հետո վերադարձել է Կապան և այսօր Կապանի արվեստի դպրոցի պարուսույցն է:

Մարիա Հարությունյանն ապրում է Ռուսաստանի Դաշնությունում, Մոսկվայում հիմնել է «Զանգ» հայկական պարի ստուդիան:

Սառա Ստեփանյանը, հուսով եմ, ապագայում նույնպես կշարունակի իմ գործը:

– Ի՞նչ կմաղթես երիտասարդներին:

– Անաղարտ պահել հայկական պարը, այն մեր ինքնության վկայականներից է, հայ տեսակի պահպանման կարևոր զենքը:

Շնորհավորում եմ հոբելյանդ, հարգելի Մելանյա, ուրախ և հպարտ եմ, որ ստեղծագործական ողջ ճանապարհիդ վկան և ուղեկիցն եմ եղել:

Ցանկանում եմ ամուր առողջություն քեզ և որդուդ՝ նրա ընտանիքի հետ միասին:

Վարձքդ ի կատար:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

«27 բնակավայր Սյունիքում՝ դատարկման վտանգի առաջ. կրթական «օպտիմալացման» մութ կողմը»

«Ազգային կրթության խորհրդի» անդամ Ատոմ Մխիթարյանը Euromedia24-ի հետ զրույցում հայտարարել է՝ «Կրթության հասանելիության ապահովում» անվան ներքո ԿԳՄՍ նախարարությունը սեպտեմբերից նախատեսում է շուրջ 230 դպրոց փակել՝ ներկայացնելով այն իբրև օպիտմալացման ծրագիր:

Փորձագետը մանրամասնում է՝ հրամանը նախատեսում է փոխել այն դպրոցների ֆինանսավորման կարգը, որտեղ սովորում է 100-ից պակաս աշակերտ.

«Ուշադրություն դարձրեք՝ նախագծում ոչ մի տեղ բառացիորեն գրված չէ «դպրոցների փակում»: Օգտագործվում են ավելի մեղմ բառեր՝ «միավորում», «կենտրոն դպրոցներ», «կլաստերիզացիա» և այլն: Բայց բովանդակային առումով սա հենց դպրոցների փակման ծրագիր է:

Այստեղ արդեն հղում էին անում կառավարության մեկ այլ ծրագրի՝ «300 դպրոց, 500 մանկապարտեզ» նախաձեռնությանը:

Բայց իրականությունը հետևյալն է. մինչև 2025 թվականի դեկտեմբերի 15-ը, այսինքն՝ մինչև 2026 թվականի մեկնարկից ընդամենը երկու շաբաթ առաջ, այդ ծրագիրը կատարվել էր մոտ 20 տոկոսով: Նախատեսված 300 դպրոցից պատրաստ և շահագործման հանձնված էր ընդամենը 60-ը:

Այս պայմաններում ենթադրվում էր, որ նոր դպրոցներ կկառուցվեն, իսկ հները կփակվեն ու կմիավորվեն դրանց հետ: Բայց սա ուղղակի անհնար է, քանի որ 229 դպրոց միավորել ընդամենը 60 կառուցված դպրոցների հետ՝ ֆիզիկապես և կազմակերպչորեն իրատեսական չէ:

Ավելին՝ այդ նոր կառուցված դպրոցների մի մասն անգամ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում չէ»,– ասում է Ատոմ Մխիթարյանը:

«Ազգային կրթության խորհրդի» ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս դպրոցների մեծ մասը գտնվում է փոքր և հիմնականում սահմանամերձ բնակավայրերում: Ընդհանուր առմամբ, 55 սահմանամերձ բնակավայրի դպրոց պետք է փակվի, որոնցից 27-ը Սյունիքում են: Փորձագետի խոսքով՝ սա նշանակում է, որ Սյունիքի 27 բնակավայր փաստացի դատապարտվում է դատարկման:

Նման իրավիճակ կա նաև Վարդենիսում, Տավուշում, ինչպես նաև Շիրակի մարզի հատկապես բարձր լեռնային համայնքներում՝ օրինակ Ամասիայի տարածաշրջանում:

//

ԿՈՐԵԼ Է Կապանի բժշկական ուսումնարանի 1997 թ. «Քույրական գործ» մասնագիտության շրջանավարտ Նաիրա Ժորայի Ավետիսյանի դիպլոմը՝ Կ № 028799, գրանցման համարը՝ № 3275, տրված 08 հուլիսի 1997 թ.: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Սիսիանի հումանիտար քոլեջի «Իրավագիտություն» մասնագիտությամբ 2006 թ. շրջանավարտ Հենրիկ Վահանի Արզումանյանի դիպլոմը՝ АК 050442, գրանցման համարը՝ 1023: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 30.03.2026թ.: